

ԱՄՓՈՓՈՒՄ

ԲԻԻԶԱՆԴԱԿԱՆ ԱՄԷՆԵՆ ԿԱՐԵԻՈՐ ԴԻԻՑԱԶՆԱՎԷՊԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

(ՃՈՒՋԵՓՈՒՆ ԳՐԱՍՍՈՆ)

Այս հաղորդումով՝ հեղինակը կը ներկայացնէ նախ բիւզանդական մեծագոյն դիւցազնավէպ «Դիդենիա Ակրիդաս»-ի Երեւանի Գիտութիւններու Ակադեմիային կողմէ եւ Հրաչ Բարթիկեանի թարգմանութեամբ եւ ուսումնասիրութեամբ լոյս տեսած արեւելահայերէն հրատարակութիւնը (Երեւան, 1978): Յետ անդրադառնալու համառոտաբար դիւցազնավէպին ձեռագրական աւանդութեան եւ հրատարակութիւններու ներկայ վիճակի մասին, հեղինակը կ'անդհարէ, հատուածներ մէջբերելով, Բարթիկեանի թարգմանութեան բնագոյնի հաւատարմութեան ու գրական արժանիքներուն վրայ: Կը յաջորդէ ընդարձակ ամփոփոյժ մը՝ Բարթիկեանի թարգմանութեան ընկերացող ուսումնասիրութեան մէջ սլարգուած գլխաւոր տեսակետներուն: Բարթիկեանի համաձայն, դիւցազնավէպին մէջ գործող բաղձաթիւ անձերու անունները կ'ենթադրեն հայկական անձնանուններ, որոնց պատմական ինքնութիւնը կարելի է նաեւ ստուգել: Միւս կողմէ յաճախ կը հանդիպինք տեղանուններու՝ որոնք կը զետեղուին Ձորերող Հայքի պատմական նահանգին մէջ: Դիւցազնավէպին մէջ ցոյցացող ընկերային կառոյցներն ալ կը մատնանշեն սերտ չլրացուած Արեւմտեան Հայաստանի, Բիւզանդիոնի սահմանակից գոտիներուն եւ յատկապէս պաղիկեան Հայերուն հետ: Դեռ ուրիշ փաստերու կարգին՝ Բարթիկեան կը նշմարէ նաեւ Տորք Անդեղի աւանդական երգերուն արձագանքը դիւցազնավէպին մէջ գործող Անկիւղաս հսկային դրուագներուն մէջ: Բարթիկեան կ'ընդհանրացնէ որ դիւցազնավէպին խորքը մեծ մասամբ հայկական է:

Հեղինակը՝ Բարթիկեանի այս տեսակէտը կը նկատէ իբրեւ ընդլայնումը Ադոնցի եւ Կրեկուարի կողմէ ժամանակին արտայայտուած վարժիքին: Կը նշէ, սակայն, որ Բարթիկեան հարկ եղած ուշադրութիւնը չէ դարձուցած Արեւմուտքի նորագոյն ուսումնասիրութիւններուն: Կը յիշէ որ հեղինակաւոր ուսումնասէրներ դեռ վերջերս յայտնած են հիմնական վերապահութիւններ «պաղիկեանական» դրոյթին նկատմամբ: Կը կատարէ գիտողութիւններ Բարթիկեանի պատմական կամ աշխարհագրական ինչ ինչ նոյնացումներու մասին: Հուսկ, կ'եզրակացնէ որ, թէեւ հարցը աւելի բարդ է քան ինչ որ կը հետեւի Բարթիկեանի ներկայացումէն, ասով հանդերձ այլեւս ստացուած տուեալ մը պէտք է նկատել՝ որ դիւցազնավէպին պատմական կորիզային խորքը կը դառնայ Եփրատի ափերու երկայնքին, Կապադովկեան դաւառներուն մէջ, Բիւզանդական կայսրութեան արեւելեան սահմաններուն վրայ՝ արաբ-բիւզանդական բախումներու շրջանին, եւ այս բոլորին մէջ Հայերը ունեցած են անտարակոյս վճռական դեր մը: Թէեւ կարելի չէ ընդունիլ Բարթիկեանի լրոր դրոյթները դիւցազնավէպի ծագումին նկատմամբ, իր գործը կը մնայ սակայն մեծապէս զնահատելի աշխատանք մը եւ կարեւոր նպաստ մը՝ դիդենիսեան ուսումնասիրութիւններուն:

ԹԵՂՈՂՈՐԻԿՈՍԻ ՀՈԱԻԵՆՆԱՅԻ ԴԱՄԲԱՐԱՆԻՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՇԻՆԱՐՈՒԵՍԸ*

ՊԱՏՄԱԿԱՆ

Բիւզանդիոնի Ձենոն կայսրը (474-491), Պարթաններու մէջ կայսրութեան հողերը, ի մասնաւորի՝ արեւմտեան Մակեդոնեան եւ Հիւսիսային Եպիրոսը Ոստրոգոթերու տեւական ասպատակութիւններէն փրկելու համար, խորհեցաւ այդ քարքարոս ցեղը, որու պետն էր Վալամիր Թագաւորը (446-469) ցեղախումբէն՝ երկատասարթ Թէոդորիկոսը, դէպի ուրիշ կողմեր ուղղել եւ անոնց ներկայութենէն ազատել կայսերական նահանգները:

Ե. դարուն, Փատլիան բարբարոսներու իրերայաջորդ արշաւանքներէն արդէն տակն ու վրայ եղած էր եւ հոն անսանձ կ'իջնէր Սկիւրացի ծագումով՝ Ուոռակը, որ գահագուրկ ըրած էր Հռոմի վերջին կայսրը՝ Հռոմուլոս Օգոստոսը:

Ուոռակը՝ Ստտիլիանի տեղակալներէն Եդիկոնի որդին էր, իսկ Հռոմուլոսը՝ նոյն Ստտիլիանի ուրիշ մէկ տեղակալին, յոյն Որեստէսի որդին էր: Մին՝ հօրը ճարպիկ քաղաքականութեամբ՝ Հռոմի կայսր էր եղած, իսկ միւսը՝ իր հօրը կոպիտ ոյժին շնորհիւ՝ «գորավար» էր եղած հռոմէական ենթադրեալ բանակին:

Հռոմայեցի ժողովուրդը, որ անգոր աւանատես էր անցած դարձածին, իր արհամարհանքը կ'արտայայտէր՝ Հռոմուլոսը կոչելով ոչ թէ «Օգոստոս», այլ «Օգոստոլոս»¹:

Ուոռակը, մեծցած Ստտիլիանի շուքին տակ եւ սնած անոր բռնատիրական ակզրունքներով, Փատլիան կը կարավառէր բարբարոսի իր քնադէով, խեղճ ու կրակ կայսրը ճամբելէն վերջ:

Բիւզանդացիները՝ միւս կողմէ՝ միշտ ինքզինքնին կը նկատէին որպէս Հռոմէական կայսրութեան ժառանգորդները: Բիւզանդիոնի մէջ պաշտօնական լեզուն կը մնար տակաւին, Ե. դարուն, լատիներէնը, որպէս Հռոմի ժառանգութիւն:

* Այս յօդուածը ծածուկի տակ էր, երբ հասաւ բօթը՝ «Բազմավէպ»ի երկարամեայ աշխատակից, վաստակաւոր հեղինակի վախճանման՝ 27 Մարտ 1981ին, ալեհեր հասակի մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

1. Augustulus կը նշանակէ փոքրիկ «Օգոստոս», այսինքն՝ փոքր, անարժէք կայսր:

Ձենոն՝ իր կայսրութեան խտալական ստացուածքները բարբա-
րութենքու ձեռքէն ազատելու միջոցը կը փնտռէր, երբ յիշեց Թէո-
դորիկոսի ներկայութիւնը արեւմտեան Պարթաններուն մէջ:

Թէոդորիկոս՝ իր պատանեկութիւնը անցուցած էր Բիւզանդիոնի
արքունիքին մէջ, որպէս պատանդ Ոստրոգոթերու: Հոն անցուցած
տասը տարիները բաւական եղած էին անոր քաղաքակիրթի չլար մը
տալու: Բիւզանդական արքունիքին մէջ՝ ան անցած էր խնամուած
ուսում եւ քիչ թէ շատ բիւզանդական նուրբ ձեւեր: Բիւզանդիոն
ստիպած տարիներուն յիշատակը՝ ձգողական ոյժի մը նման՝ զինքը
բերած էր, Ոստրոգոթ իր ցեղախումբին հետ, Դանուբեան դաշտա-
գետինէն մինչեւ արեւմտեան Մակեդոնիա եւ հիւսիսային Եպիրոս,
ուր միշտ վաճկատուն կը թափառէր եւ կ'ասպատակէր՝ յուսարով
հասնիլ մինչեւ Բիւզանդիոն եւ նոյնիսկ ունեցած էր Բիւզանդացուց
հետ բախումներ: Բայց տեսնելով իր երազին անիրականալիութիւնը,
կը խորհէր երթալ եւ գրաւել Իտալիան Ողոտակէն եւ հոն, հաստա-
տել Ոստրոգոթ թագաւորութիւն մը, ինչպէս ըրած էին Վիդիգոթերը
Սպանիոյ մէջ: Բայց՝ Օքրիդայի լիճին եզերքները, բեռնային կիր-
ճերու անցքին մէջ, կրած էր ծանր պարտութիւն մը, բիւզանդական
բանակին պատրաստած ծուղակին մէջ իյնալով: Իտալիոյ տիրա-
նալու իր մեծ երազը, գոնէ աստենուան մը համար կը մնար անի-
րագործելի: Պէտք էր, նախ, իր ցեղակիցները ի մի հաւաքել եւ նո-
րեկ ուրիշ Ոստրոգոթ ցեղախումբերու հետ զինակցել:

Ու ահա՛, ճիշտ այդ ժամանակ իրեն կը հասնէր Ձենոն կայսեր
առաջարկը՝ երթալ Իտալիա եւ զայն գրաւել Ողոտակէն:

Բիւզանդական դիւանագիտութիւնը շատ ճարտար էր: Մէկ կող-
մէ՝ Պարթանները կ'ազատէր Թէոդորիկոսի ասպատակութիւններէն,
միւս կողմէ ալ՝ Ողոտակ եւ Թէոդորիկոս իրարու հետ կռուելով,
զիրար կը տկարացնէին. ինչ որ կը դիւրացնէր Բիւզանդացիներուն՝
վերջնական հարուածով մը՝ Իտալիայէն դուրս քշել այդ բարբարոս-
ները: Իսկ քաղաքական տեսակէտէն ալ Թէոդորիկոս կ'ըլլար կայ-
սեր գործակատարը, ինչ որ կ'ապահովէր Ձենոնի գերակշիռ դիրքը
Իտալիոյ մէջ:

Թէոդորիկոս՝ Աքուիլէիայի (Իգոնցոյ), Վերոնայի եւ Հռաւեն-
նայի իրերայաջորդ երեք ճակատամարտերով ջախջախեց Ողոտակի
զօրութիւնը, զոր Հռաւեննայի առջեւ իր ձեռքով ապանեց, եւ հա-
տատուեցաւ Հռաւեննայի՝ հռոմէական վերջին կայսրերու պալա-
տին մէջ:

Այդ դարերուն Հռաւեննան՝ ճահիճներով շրջապատուած քաղաք
մըն էր: Այս պարագան անոր կու տար անբռնարարելի ռազմական
դիրք մը, ոսկից դիւրին էր հակալէռել եւ տիրապետել Իտալիոյ
հիւսիսային մասին: Արդէն ասոր համար էր՝ որ հռոմէական վեր-

ջին անկարող կայսրերը, Հոնորիոսէն սկսած, Հռոմը ձգելով Հռա-
ւեննա փոխադրած էին կայսրութեան մայրաքաղաքը, ճահիճներու
ետին ապաւէն գտած: Հռոմ կը մնար Ծերակոյտը միայն:

Թէոդորիկոս, սակայն, Արիոսի հետեւորդ մըն էր², ինչպէս բո-
լոր Գոթերը՝ Վիդիգոթ թէ Ոստրոգոթ: Արիոսականութիւնը՝ Նի-
լոր Գոթերը (325) ասդին նկատուած էր նգովուած ազանդ մը,
ուղղափառ Եկեղեցիէն, ըլլա՛յ Հռոմի թէ Բիւզանդիոնի, եւ իբր այդ՝
հալածանքի ալ ենթարկուած: Այնպէս որ, Իտալիոյ բնիկ Ժողովուր-
դը, որ ուղղափառ Եկեղեցիէն էր, գոռարութեամբ եւ պարտադրա-
բար ընդունեցաւ Թէոդորիկոսի իշխանութիւնը, հակառակ որ ան իր
բոլոր կարելին ըրաւ իտալացիները սիրաշահելու համար: Ան՝ Հռոմի
աւերակները վերոնորոգելու ձեռնարկեց, ջրմուղները եւ ճամբաները
նորոգեց, ճամբաներու ապահովութիւնը վերահաստատեց: Բնական
է՛ իր առաւելագոյն ուշադրութիւնը կեդրոնացուց Հռաւեննան բա-
րեզարդելու եւ գեղեցկացնելու գործին, քանի որ այն քաղաքը ըն-
տրած էր որպէս մայրաքաղաք՝ Իտալիոյ իր «Թագաւորութեան»:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թէոդորիկոսի օրովն է որ շինուեցաւ Հռաւեննայի մէջ Արիոսա-
կաններու նշանաւոր Մկրտարանը, որու խճանկարները մինչեւ այսօր
աշխարհի հիացումին առարկայ են:

Ան շինել տուաւ, ինչպէս կը վայելէր իրեն նման «Արքայ»ի մը,
Թագաւորական եկեղեցին, «բազիլիկա»ն, Հռաւեննայի մէջ: Այս բա-
զիլիկան՝ այսօր կը կոչուի Sant'Appollinare Nuovo:

Թէոդորիկոս, թէեւ ինքզինքը Իտալացիներուն կը ներկայացնէր
որպէս Բիւզանդիոնի կայսեր գործակատարը, անոնց համալրութիւ-
նը գրաւելու համար, բայց՝ ներքնապէս ուրիշ մտածումներ ունէր:
Ան՝ ինքզինքը կը նկատէր արդէն Իտալիոյ թագաւորը եւ իր հեռա-
ւոր երազն էր ի մի հաւաքել բոլոր Գոթերը եւ հիմնել դոթական
կայսրութիւն մը, որ տարածուէր Աստիանտեանի եզերքներէն մինչեւ

2. Արիոսականութիւնը, աղեքսանդրացի եկեղեցական Արիոսի՝ 319 թուականն-
րուն քարոզած աստուածաբանական տեսութիւնն է որ 325ի Նիկիոյ Ժողովին
դատապարտուեցաւ իր հերետիկոսութիւն: Արիոս (280-336) չէր ընդունէր Ս.
Երրորդութեան համադոյալեցութիւնը: Ըստ իրեն, Հայրը եւ Որդին միայն
իրարու նման են (ὁμοούσιος), բայց ոչ միեւնոյն փութեանէն (ὁμοούσιος):
Այս վարդապետութիւնը՝ բիւզանդացի կայսրերէն ոմանք պաշտպանեցին եւ
գրեթէ բարբարոս բոլոր ցեղապետները եւ Թագաւորները արիոսական դաւա-
նութեամբ մկրտուեցան: Այս վարդապետութեան դէմ բուռն կերպով պայքա-
րեցաւ Աղեքսանդրիոյ հայրապետ՝ Ս. Աթանասը, Նիկիոյ Ժողովին մէջ: Աթա-
նաս կ'ըսէր՝ Թէ Հայր Աստուած եւ Որդին՝ Բանը բացարձակապէս միեւնոյն
փութիւնն ունին: Նիկիոյ Ժողովը հաստատեց այս դաւանութիւնը եւ բանա-
ձեւեց այն Հաւատոյ Հանգանակը, որ ծանօթ է Նիկիական Հանգանակ անունով:

սլաւական տափաստանները: Հարաւէն դէպի հիւսիս, այս կայսրու-
թեան մէջ պիտի մտնէին Խտալիայէն մինչեւ Սկանտինաւիա՝ որ ար-
դէն Գոթերու հայրենիքն էր: Այս երազը, Թէոդորիկոսէ երեք հա-
րիւր տարի վերջ, Մեծն Կարոլոս մասամբ իրադրածեց, «Գերմանա-
կան Սրբազան Կայսրութիւն»ը հիմնելով:

Թէոդորիկոս քնաւ նկատի չէր առնել՝ թէ ինքը Արիոսական մըն
էր եւ չէր կրնար վերջնականապէս իշխել ուղղափառ Եկեղեցիին ժո-
ղովուրդներուն վրայ: Իր հիմնած եւ շինել տուած բազիլիկան ըն-
ծայեց Յիսուս Քրիստոսի՝ Ս. Փրկիչ անունով:

Բարբարոսներու արշաւանքները՝ դէպի քաղաքակիրթ Հռոմէյա-
կան կայսրութեան երկիրները՝ ամէն ինչ տակնուվրայ ըրեր էին:
Իրերայաջորդ այս արշաւները՝ քաղաքական, տնտեսական, արհեստ-
ներու եւ շինարուեստի մարդերուն մէջ մեծ կորուստներ պատճառած
էին եւ նոյնիսկ Վիսիգոթներու տգիտութիւն մը հաստատած:

Շինարուեստի Հռոմէական հին կոլլեգիումները ցրուած եւ լուծ-
ուած էին: Շինարուեստի կանոնները եւ գիտարուեստը մոռցուած էր
դրեթէ: Հազիւ թէ Խտալիոյ հիւսիսը կրցեր էր իրենց պոյութիւնը
պահել Magistri commacini կոչուած վարպետներու կողմէրում մը՝
որ հռոմէական չքեղ ճարտարապետութենէն կը վերապրեցնէր ճար-
տարապետական ամենազիւրին շինարուեստը՝ բազիլիկաներու կա-
ռուցումը:

3. Բարբարոսներու արշաւանքներէն փախչելով, հիւսիսային Խտալիոյ բնակիչնե-
րէն մաս մը ապաստանեցաւ Ալպաններու հարաւային կողմը՝ Լիճերու շրջա-
նակին մէջ, որ բարբարոսներու հեծելազօրքին դժուարամատչելի ըլլալով, մա-
սամբ ապահով վայր մըն էր: Օրթայի լիճի, Լակոյ Մաճորէի եւ Քոմոյի լիճին
ալպեան վայրերը փախստական նորեկ բնակչութեան շնորհիւ ծաղկեցան: Այս
վայրերը ապաստանողներուն հետ եկան տեղացի ճարտարապետներ եւ շինարար
վարպետներ, որոնք միասին բերին հռոմէական կոլլեգիումներու շինարուեստի
ակզրունքները: Այս վարպետները կոչուեցան Magistri commacini (իտ.
Maestri commacini. տե՛ս ասոնց մասին՝ U. MONNERET DE VILLARD,
L'organizzazione industriale nell'Italia longobarda durante l'Alto Me-
dio Evo, «Archivio Storico Lombardo», XLVI (1919), pp. 37-51; ID.,
Note sul memoratorio dei maestri commacini, ibid., XLVII (1920),
pp. 1-161): Ասոնք անխափան կրկնեցին հռոմէական շինարուեստէն իրենց
մնացած բազիլիկաներու կառուցումի ձեւը: Միակ նորութիւնը՝ զոր մտցուցին
իրենց ճարտարապետութեան մէջ, էր փոքր ծաւալով քարերու գործածութիւնը,
որոնք տաշուելու, յղուելու պէտք չունէին եւ նոյնիսկ քարահանքերու ալ կա-
րէ՛ք չկար: Երկրի երեսին տարածուած քարերը հաւաքելով կը շինէին: Ասիկա
թերեւ այն պատճառով՝ որ շատ ճարտար չէին քարերու վրայ աշխատելու,
զանոնք տաշելու եւ յղելու: Շինութեան այս ոճը աւելի վերջը կոչուեցաւ
«Լոմպարդական» շինութեամբ: Լոմպարդացի թագաւորներ՝ Հոթթարիս (636-
656) եւ Լիուտպրանդ (712-744) հետաքրքրուեցան ճոճաշիններու գործունէու-
թեամբ եւ մասնաւոր օրէնքներով կազմակերպեցին այս վարպետներու կոլլե-
գիումները:

Երբ Թէոդորիկոս մտադրեց իր «Մայր եկեղեցի»ն շինել, այս-
ինքն Արիոսականներու մայր եկեղեցին, ասիկա ուրիշ ձեւ չէր կր-
նար շինուել բայց եթէ բազիլիկայի ոճով:

Եւ Ս. Փրկիչ եկեղեցին շինուեցաւ բազիլիկեան ոճով. արտաքին
երկու զուգահեռական աղիւսաւն ունէր, ներքին երկու սիւնաշարեր,
որոնք փայտաւն տանիքը վեր կը բռնեն: Այս կառուցումին աշխա-
տեցան՝ Բոմաշիմ վարպետներու հետ, բիւզանդացի եւ արեւելցի
գործաւորներ:

Շէնքը աղիւսաւն էր, ինչպէս միւս բոլոր շէնքերը Հռաւեննայի
մէջ, որովհետեւ շրջակայքը չկան քարահանքեր: Երկիրը ճահճային
է եւ հողը՝ կաւային: Եւ որովհետեւ Թէոդորիկոս՝ Բիւզանդիոնի մէջ
տեսած էր դմայլելի խճանկարներով զարդարուած եկեղեցիներ, ու-
ղեց որ իր մայր եկեղեցին ալ զարդարուի խճանկարներով, որոնք
իր փառքը պիտի պատմէին դալիք սերունդներուն: Եւ Ս. Փրկիչ՝
մայր եկեղեցին զարդարուեցաւ չքնաղ խճանկարներու եռյարկ
շարքով մը:

Առաջին շարքին խճանկարները, կեդրոնական առեանին երկու
կողմերու երկայնքին, կը ներկայացնէին Թէոդորիկոսի պալատը՝
Հռաւեննա քաղաքով եւ Կլասսիսի (Classis) զինուորական նաւահան-
դիստը: Ասոնցմէ ախտալ կ'երկարէր Թէոդորիկոսի յաղթական Թա-
փօրը, առեանին մէկ ծայրէն միւսը, մինչեւ արեւելեան ծայրի «Ս.
Կոյսը եւ Մանուկը» եւ «Ս. Փրկիչ» խճանկարները:

Երկրորդ շարքի խճանկարները կը ներկայացնէին, պատուհան-
ներու միջանկեալ որմերուն վրայ, սուրբերու նկարներ: Իսկ երրորդ
շարքի խճանկարները՝ դրեթէ ձեղունին տակը կորսուած՝ Յիսուսի
կեանքէն դրուադներ կը պարզէին:

Այս խճանկարները՝ Թէոդորիկոս ուղեց որ ըլլան հելլէն ու հռո-
մէական ոճով, այսինքն՝ քնական եւ կենսունակ արտայայտութեամբ
մը, փոխանակ բիւզանդական՝ անշարժացած վեհափառ ոճին:

Թէոդորիկոսի ջանքերը, Բիւզանդիոնի մօտ, կրօնական գետնի
վրայ հասկացողութիւն մը պտնելու համար, Հռոմի Պապին՝ Յով-
հաննէս Ա.ի Բիւզանդիոն ուղեւորութիւնը Թէոդորիկոսի դրդումով՝
հաննէս Ա.ի Բիւզանդիոնի կայսրը Յուստինոս (518-527) անդրդուելի վը
մնար եւ Արիոսական աղանդին դէմ իր հալածանքները կը սաստ-
կացնէր:

Թէոդորիկոս, ճարահատ, իր կարգին հակամիջոցներ ձեռք կ'առ-
նէր ուղղափառ Եկեղեցիին դէմ: 526ի Օգոստոս 26ին՝ վերոնայէն
տրուած Թագաւորական հրովարտակով մը կը փակէր Խտալիոյ ուղ-
ղափառ եկեղեցիները:

Կրօնական գետնի վրայ տարուած այս պայքարը անհաւասար էր եւ Թէոդորիկոսի մահէն տասը տարի վերջ, Գոթերու տիրապետութեան անկումին, երբ Բիւզանդացիները, Յուստինիանոս կայսեր օրով (527-565), տիրեցին Հռաւեննայի (540), հալածեցին Արիոսականները՝ այսինքն Ոստրոգոթները:

Թէոդորիկոսի կառուցած Ս. Փրկիչ մայր եկեղեցին անցաւ ուղղափառ Եկեղեցիին եւ կոչուեցաւ Սբ. Մարտիրոս, ի յիշատակ Թուրքաքի եպիսկոպոս Սբ. Մարտիրոսի՝ որ անխոնջ պայքարած էր Արիոսական աղանդին դէմ: Եկեղեցիին խճանկարներու առաջին շարքը, ուր Թէոդորիկոսի փառքը կը պատկերանար, բոլորովին քանդուեցաւ անոր կենդանադիրին հետ, եւ տեղը դրուեցաւ՝ բիւզանդական ոճով՝ Կոյսերու եւ Մարտիրոսներու խճանկարներու նշանաւոր շարքը, որ մինչեւ այսօր՝ այցելուներու հիացումին առարկայ է: Այս շարքին Թէոդորիկոսի խճանկարներէն պահուեցան միայն՝ Պալատին, Կլասսիսի, Ս. Կոյսին եւ Ս. Փրկիչի խճանկարները:

ԴԱՄԲԱՐԱՆԸ

Թէոդորիկոս ուղեց որ իր իսկ ողջութեան կառուցուի իր դամբարանը: Ինչպէս իրմէ առաջ Ատտիլան՝ հունդարական դաշտապետնին մէջ բարձրացուցած էր հողաբլուր մը, ինչպէս Թէոդեմիր շինած էր իր հողաբլուրը Միսիայի (Mysia, Moesia) մէջ, ինչպէս իր առասպելական նախահայրը՝ Ամալ շինած էր Գոթլանդի մէջ:

Թէոդորիկոս՝ աւելի քաղաքակրթուած՝ ուղեց որ այս դամբարանը պարզ հողաբլուր մը չըլլար, այլ քարաշէն՝ դարերու քանդիչ ազդեցութիւններուն դիմացող կերտուածքով շինութիւն մը, բոլորովին տարբեր հռաւեննեան շինարուեստի արտայայտութիւններէն եւ իր եղակի կառուցումովը միշտ մնար եւ յիշեցնէր զինքը:

Թէոդորիկոս, իր վերջին տարիներուն, Հռաւեննայի մէջ հաւաքած էր, բիւզանդացի եւ այլ արեւելցի վարպետներ, որոնց աշխատութեամբը սկսած էր կազմուիլ կառուցումի դպրոց մը, ուր քարագործութիւնը բաւական յառաջացած էր. այն աստիճան՝ որ Ռուէն քաղաքի Սէն Փիէր լը Վիֆի արքան՝ մասնաւորաբար այդ վարպետներէն ոմանք կանչած էր իր եկեղեցին շինելու համար:

Հակառակ այս քարագործներու ներկայութեան, տակաւին Հռաւեննայի մէջ չկար ճարտարապետ մը՝ որ կարենար ազիւսաշէն բազիլիկայի ոճէն դուրս, ինքնատիպ, քարաշէն կառուցում մը ի դուրս հանել՝ հոյաշէն ոճով մը:

Թէոդորիկոս Հռոմի մէջ տեսած էր Ալբրիանոս կայսեր հսկայ դամբարանը, որ ցարդ կը մնայ՝ թէեւ չատ փոխուած եւ խախտ-

ուած. սա՛ Սանթ'Անճելոյ գղեակն է: Եւ փափաքեցաւ որ անոր նըմանո՞ղ դամբարան մը ըլլայ իրն ալ:

Տեղւոյն վրայ նման շէնք մը շինելու կարող ճարտարապետ մը չգտնուելուն, պէտք եղաւ օտար ճարտարապետի մը դիմել:

Շէնքը՝ տասնանկիւն բազմանկիւն մըն է, երկու յարկի վրայ, ծածկուած միակտուր սալաքարէ՝ ծանրաբերձ եւ դմբեթաճեւ տանիքով մը: Շէնքին՝ արբատաշ քարերը եւ տանիքի սալաքարը բերուած էին, ծովու ճամբով, Ալբրիանի արեւելեան եղերքներէն՝ Իսթրիայի քարահանքերէն:

Գետնայարկի յատակադիւր՝ ներքնապէս խաչաձեւ է եւ հաւանաբար հոս պէտք է գտնուէր Թէոդորիկոսի պորփիրէ տապանը (sarcophagus), իսկ առաջին յարկը՝ ներքնապէս բոլորակաձեւ է: Ըստ կառուցուածքի դասակարգման, ան պէտք էր ըլլար մատուռ մը եւ կամ աղօթանոց մը:

Միակտուր քարէ, դմբեթաճեւ տաշուածքով տանիքը տարակոյս մը կ'արթնցնէ՝ ճարտարապետին քարէ դմբէթ շինելու արուեստի մասին: Սա ցոյց կու տայ թէ քարաշէն դմբէթ մը շինելու դժուարութենէն խուսափելու համար է որ, հաւանականօրէն, որոշած է հսկայ սալաքար մը, դմբեթաճեւ տաշելով, որպէս դմբէթ զննել շէնքին վրայ: Այս պարագան, Ե. դարուն, ճարտարապետին ուսկի՛ց եկած ըլլալը թերեւս յայտնող աղբանիչ մը ըլլայ:

Այս դամբարանը տեսակ մը առեղծուած է եղած զեղարուեստի պատմաբաններուն համար, անոր արտաքին նախնական ձեւը որոշելու խնդրին մէջ: Որովհետեւ այժմու տեսքը չի կրնար եղած ըլլալ անոր նախնական ձեւը: Դարերու ընթացքին, մարդոց եւ բնութեան կատարած աւերումները անոր իսկական ձեւը չեն թողած մեղի:

Անոր վրայ տեսնուած շինութիւններու հետքեր, մասնաւորաբար երկրորդ յարկի որմերուն վրայ մնացած քառանկիւնի ծակերը, ու մանց ենթադրել տուած են⁴ թէ այս երկրորդ յարկը շրջապատուած պէտք էր ըլլալ կամարածածքով մը (portique): Եւ կամ թէ կամարածածակ խորշերու շարք մը, արձաններով զարդարուած⁵, կը շրջապատէր այս երկրորդ յարկը:

Գմբէթ-տանիքին միակտուր քարէ ծածկոցին վրայ տեսնուած տաներկու պատուանդանները՝ հաւանաբար կը կրէին արձաններ Առաքեալներու եւ Աւետարանիչներու, թէեւ այս պատուանդանները հաւանօրէն ծառայած ըլլան նաեւ ծանրաբերձ քարէ ծածկոցը փո-

4. Հմմտ. Vandelliի վերակազմութիւնը:

5. Schulz՝ իր վերակազմութեան մէջ կը զննէ կամարածածակ խորշեր, որոնց մէջ կ'ենթադրէ թէ ըլլային պատերազմիկ դրժերու արձաններ: Durmի վերակազմութիւնը աւելի կը մօտենայ յիշատակարանին այժմու տեսքին:

խաղերելու եւ տեղը դնելու համար պործածուած պարաններուն որպէս հանդերուան:

Ոմանք ալ կը կարծեն թէ՝ այս պատուանդանները դրուած ըլլան զմբեթածեւ տանիքը՝ իր յենակէտերուն վրայ զօրացնելու համար, ինչպէս որ կը տեսնենք Կ. Պոլսոյ Ս. Սոփիայի զմբէթին վրայ: Այսպէս մտածողները կը մոռնան թէ Ս. Սոփիայի զմբէթին դիտարուեստը միեւնոյնը չէ Թէոդորիկոսի դամբարանին զմբէթին դիտարուեստին հետ: Ս. Սոփիայի զմբէթը աղիւսաւէն է, իսկ այս դամբարանին տանիքը միակտուր քարէ: Յետոյ՝ Թէոդորիկոսի դամբարանը շինութեան թուականի տեսակէտով կը կանխէ Ս. Սոփիայի շինութիւնը, անկից օրինակ առնելու համար: Ասկից զատ՝ այս պատուանդանները ծածկուած են հորիզոնական ձեւով, ինչ որ իրենցմէ կը վերցնէ զմբէթը զօրացնելու որեւէ առնչադրութիւն:

Այս հարցերուն մասին՝ դժուար է վերջնական, ընդունելի եզրակացութեան մը յանդիլ: Մանաւանդ որ՝ դիտենք թէ երբ Բիւզանդացիները տիրապետեցին Հռաւեննայի եւ հոնկէ վանեցին Արիոսականները, ամէն միջոցով աշխատեցան ջնջել որեւէ հետք Թէոդորիկոսէ: Ինչպէս որ փոխեցին անոր շինած մայր եկեղեցիին անունը, Ս. Փրկիչը ընելով Ս. Մարտինոս, ինչպէս որ սոյն եկեղեցին դադարեց Թէոդորիկոսի խճանկար կենդանադիրը քանդեցին ու ոչնչացուցին, իր դամբարանն ալ կրեց փոփոխութիւններ եւ անուանուեցաւ «Հռաւեննայի կտոր Ս. Աստուածածին» (Santa Maria Rotonda in Ravenna)⁶, որուն կցուեցան վանք մը եւ զանգակատուն մը:

ԺԸ. դարուն Բորոնելիի հրատարակած յիշեալ նկարին մէջ (ծն. 7) կը տեսնուի որ զետնայարկը ամբողջութեամբ հողին մէջ թաղուած է:

Նախորդի Աղդային Թանգարանին մէջ պահուող ձեռնարկէ Պելլի-նիի «Այլակերպութիւն» նկարին մէջ կը տեսնուի այս դամբարանը զանգակատունով մը. նոյնը կը տեսնուի նաեւ՝ Հռաւեննայի մայր

6. Շատ աւելի վերջն է, Թ. դարուն, որ Ս. Մարտինոս անունը փոխուեցաւ այսօրուան Ս. Ապոլինարին, Սանթ'Ապոլինարէ Նուովոյ: Թ. դարուն Հռաւեննա քաղաքէն դուրս, Կլասսիսի Ս. Ապոլինար եկեղեցիին մէջ թաղուած Ս. Ապոլինարի աճիւնները փոխադրուեցան Հռաւեննա եւ դրուեցան Ս. Մարտինոսի եկեղեցիին մէջ՝ որ աւելի ապահով էր: Որովհետեւ այդ ժամանակները, Արիոսականի ասիերը ասպատակող Սարակինոսները կրնային ծովեզերեայ Կլասսիս Թաղը ոտք դնել եւ Սուրբին շիրիմը պղծել: 1173ին, երբ այլեւս Սարակինոսները վտանգը անհետացած էր եւ Սուրբին աճիւնները վերադարձուեցան Կլասսիսի Ս. Ապոլինար եկեղեցին, Հռաւեննայի Ս. Մարտինոսը պահեց Ապոլինարի անունը եւ մինչեւ այսօր ալ ան ծանօթ է «Սանթ'Ապոլինարէ Նուովոյ» անունով: Կլասսիսի եկեղեցին՝ զանազանութիւն համար Հռաւեննայիէն՝ կոչուեցաւ Sant'Apollinare in Classe:

7. ԺԸ. դարուն V. Coronelliի հրատարակած պատկերը այս անունով կը ներկայացնէ Թէոդորիկոսի դամբարանը:

եկեղեցիին մէջ գտնուող՝ Ս. Փարմեցցանիի «Pietà» նկարին մէջ ալ, ուր զանգակատունը աւելի կարեւոր կառուցում մը կը ներկայացնէ:

Թէոդորիկոսի դամբարանը՝ ուրեմն կրած է քաղմաթիւ փոփոխութիւններ, որոնք կը դժուարացնեն անոր սկզբնական ձեւը ճշտելու աշխատութիւնները:

Բայց, ինչ որ չէ փոխուած Զ. դարէն, այսինքն անոր կառուցումի թուական՝ 520էն ի վեր, է չէնքին կառուցումի արուեստը:

Ճարտարապետութեան պատմաբանները, որոնք այս յիշատակարանով զբաղած են եւ որոնք աւելի քանասէրներ են քան կառուցողներ, չեն մտածած աւելի մօտէն հետաքրքրուել անոր շինութեան դիտարուեստին, մանաւանդ որ այս չէնքը՝ յանկարծ՝ քարաչէն կը յայտնուի, աղիւսաշինութիւնը գործածող շրջանի մը մէջ: Ոչ ոք խորհած է մօտէն նայիլ չէնքը կազմող սրբատաշ քարերուն տաշուածքին եւ շարուածքի դիտարուեստին, դիտական եզրակացութեան մը դադու համար:

Բայց, յաճախ, շատ փոքր մանրամասնութիւն մը, քարաչէն պատի մը հիւստուածքին մէջ՝ շատ աւելի քաներ կարող է ըսել՝ քան էջերով ճարտար ենթադրութիւններ՝ այդ կառուցումի ակիդրի մասին:

Նախ դիտել տանք Թէոդորիկոսի դամբարանին շինանիւթի վարտուութիւնը Հռաւեննայի ընդհանուր եւ աւանդական շինանիւթէն:

Հռաւեննայի բոլոր յուշարձանները, Գալլա Պլակիդիայի (Galla Placidia) չքնաղ դամբարանը, Սան Վիթթալէի Նշանաւոր եկեղեցին, Գալլա Պլակիդիայի շինել տուած Ս. Յովհաննէս Աւետարանիչ մեծ եկեղեցին, Ուղղափառներու Մկրտարանը, Արիոսականներու Մկրտեկեղեցին, Ուղղափառներու Մկրտարանը, Արիոսականներու Մկրտարանը, Սանթ'Ապոլինարէ Նուովոն, Թէոդորիկոսի ենթադրեալ տարանը, Սանթ'Ապոլինարէ Նուովոն, Թէոդորիկոսի պաշտպանութեան ռազմական շինութիւնները, ամբողջութեամբ աղիւսաչէն են, տեղացի վարպետներու ձեռքով իրագործուած:

Սակայն ոչ ոք զարմացած է՝ տեսնելով քաղաքէն դուրս, դաշտին մէջ, սրբատաշ քարէ՝ երկյարկանի յիշատակարան մը շինուած Զ. դարուն:

Աղիւսով շինելու գիտարուեստը կը տարբերի սրբատաշ քարով (pierre de taille) շինելու գիտարուեստէն: Աղիւսով աշխատող որմնադիրը, ա'յդ ալ Զ. դարուն, դժուարաւ թէ գիտնար քար տաշելը, յղկելը եւ իրարու ադուցանելով պատ մը շինելը, եւ ուրիշ պատերու եւ կամարներու միացումով չէնք մը կառուցանելը:

Ուրեմն Թէոդորիկոսի դամբարանին ճարտարապետը՝ քարաչէն կառուցող վարպետ մըն է եղած, «ճարտարապետ ի քար» (magister lapidum): Ապա ուրեմն քնիկ տեղացի մը չէ: Օտար մըն է որ եկած է իրականացնելու համար Թէոդորիկոսի բաղձանքը՝ քարաչէն շինելու:

Յետոյ կայ չէնքին ձեւը՝ որ կը ծնի չէնքի յատակադիւծէն:

Իրաւ է՝ Հռոմայեցիները եւ Հելլէնները բաղմանկիւն շէնքեր կը շինէին, ինչպէս է Աթէնքի «Հովերու աշտարակ»ը, շինուած Անդրոնիկոս Կիւռացիէ, Ա. դարուն (ն. Բ.)։ Հռոմայեցիները շատ աւելի մեծ համեմատութիւններով շինած են կլոր կամ բաղմանկիւն յուշարձաններ, դամբարաններ։ Բայց, բարբարոսներու իրերայաջորդ արշաւներով ամէն լրան տապալած, կառուցումի գիտարուեստը մոռցուած էր։ Հռոմայեցի Վիտրուվիոսի (Ա. դար ն. Բ.) դրած տասը հատորները՝ ճարտարապետութեան մասին՝ կորսուել էին։ ԺԵ. դարուն էր որ անոնք վերադառնուեցան պատահամբ Մոնթէ Բասսինոյի վանքին ձեռագիրներուն միջեւ։


Եւ ահա, Ե. դարու Եւրոպայի աղքատ ճարտարապետութիւններուն մէջէն կը տեսնենք դուրս ցցուած կառուցում մը՝ որ կը դարտուելի, թէ՛ իր շինանիւթով, թէ՛ իր յատակադիւծով եւ թէ՛ շինելու արուեստովը, տեղական շէնքերու շինարուեստէն եւ յղացումէն։

Անտարակոյս, այս յուշարձանին ճարտարապետը մէկն է՝ որ վարժութիւն ունի քար դորձածելու եւ հասարակ ուղղանկիւն քառանկիւն յատակադիւծերէ տարբեր յատակադիւծեր իրագործելու կարող եւ տեղեակ է։


Ան Արեւելքէն եկած պէտք է ըլլայ, քանի որ այդ վերիվայրումներու դարաշրջանին, Արեւելքը՝ բարբարոսներու արշաւանքներէն զերծ մնացած՝ կը շարունակէր դասական կառուցումներու գիտարուեստը։ Բիւզանդիոն աղիւսի մարզին մէջ, Հայաստան եւ Ասորիք քարի մարզին մէջ։ Արդէն՝ Թէոփորիկոս շինել տուած իր փճանկարներուն համար արեւելքէն վարպետներ բերել տուած էր։ Կասիոփորոսէ գիտենք նաեւ որ Թէոփորիկոսի արքունիքին մէջ կը գործէր Դանիէլ անունով ճարտարապետ մը, յիշուած հռոմայեցի ծերակուտականէն 507-511 թուականներուն միջեւ⁸։ Արուեստի հեղինակաւոր պատմաբաններ իրաւամբ ենթադրած են թէ այս ճարտարապետը արեւելեան ծագում ունենար, նկատի առած որ նոյն շրջանի քրիստոնեայ հռոմէացիներուն միջեւ չափազանց ցանցառ էին, գրեթէ անդոյ, սուրբ գլխան-հրէական ծագումով անձնանունները⁹։

8. Magni AURELII CASSIODORI Senatoris Variarum libri XII, l. III XVIII, **Commonitorium**. Danieli Theodoricus rex, a. 507/511, in «Monumenta Germaniae Historica», SS. **Antiquissimi**, t. XII, Berolini 1894, p. 89.



9. Հմտ. CH. BAYET, **Recherches pour servir à l'histoire de la peinture et de la sculpture en Orient avant la querelle des Iconoclastes**, «BE-FAR», fasc. X, Paris, 1879, p. 117, որ կը մէջբերէ LE BLANT, **Inscriptions chrétiennes des Gaules**, II, Préface, p. CXIII-CXIV; O. M. DALTON, **Byzantine Art and Archeology**, Oxford, 1911, p. 737; J. STRZYGOWSKI, **Die Baukunst der Armenier und Europa**, Wien 1918, t. II, p. 737.




Պատ. 1.— Թէոփորիկոսի դամբարանը. Հոսեմնա։



Պատ. 2.- Թէոդորիկոսի դամբարանը՝ ըստ Auguste Choisyի:




Պատ. 3.- Դամբարանին յատակագիծերը:




Պատ. 4.- Գամբարանին կառուածը:




Պատ. 5.- Թէոդորիկոսի դամբարանը.
սրմէրու եւ աղեղնէրու մանրամասնութիւններ (լուսանկար՝ Ս. Ճէվախիրեանի):




Պատ. 6.- Թէոդորիկոսի դամբարանը. ատամնաւոր աղեղնաճաբերու մասնակի տեսք
(լուսանկար՝ Ս. Ճէվախիրեանի):




I.
Ատամնաւոր աղեղնաճաբերով
կամար:



II.
Ա. Զեւ.- Կիսաբոլորակ
աղեղի մը ձեւափոխումը:



III.
Աղեղնակապ ճաբին խախտումը:



IV.
Բ. Զեւ.- Սրակտուց աղեղի
ձեւափոխումը:


Պատ. 7.- I. Ատամնաւոր աղեղնաճաբերու շարուածքը աղեղի մը վրայ.

Տեկոբ (485-495), Հռաւեննա (520):

II, III, IV. աղեղի մը ձեւափոխութեան զանազան ձեւերը:




Պատ. 8.- Տեկորի տաճարը, վերանորոգուած Ե. դարուն
(լուսանկար՝ Ս. Ճէվախիրեանի):




0 5 m.

Պատ. 9.- Տեկորի տաճարին յատկացիծը՝ ըստ Թ. Թորամանեանի:



0 5m

Պատ. 10.— Տեկորի տաճարին հիւսիսէն հարաւ հատուածը
եւ ատամնաւոր աղեղներու դիրքը՝ ըստ Թ. Թորամանեանի:



Պատ. 11.— Տեկորի տաճարին ներքին մեծ աղեղներու նորոգութեան ժամանակ
աղեղնախորհրդի ատամնաւոր տաշուածքը:

Ատամնաւոր կամարաքարերու գիտարուեստը՝ ճարտար ձեւ մըն է քարերը տաշելու: Այսպէս «ատամնաւոր» տաշուած քարերը՝ կամար կաղմբնուն իրարու հետ կը զօդուին եւ կամարին կու տան ապահովութիւն մը, երբ նոյնիսկ աղեղասկիզբները (naissances) կը քուժ կրեն (affaissement):

Այս ձեւ տաշուած եւ աղեղ կապած կամարաքարերու ներկայացուցած առաւելութիւնը աւելի լաւ ըմբռնելու համար, քննենք թէ ինչպէս կամար մը կամ աղեղ մը ձեւափոխութեան (déformation) կ'ենթարկուի իր վրայ բեռնաւորուած ծանրութեան տակ:

Աղեղի մը ձեւափոխութեան երկու պարագաներ կան, ըստ աղեղի ձեւին:

Ա. ԶԵԻ. — Երբ աղեղը ուղիղ կիսաբոլորակ է (plein cintre), իր վրայ դրուած ծանրութեան տակ կը ձեւափոխուի եւ կամ աւելի ճիշտ՝ կը ձգտի ձեւափոխուիլ, իր շրջագծին երեք կէտերուն, կամարակապին եւ կողերուն վրայ ճեղքուելով (Ա. Բ.) (Պատ. 7 - II): Ա կէտի ճեղքը, որ կը համապատասխանէ աղեղնակապին, կը խախտէ աղեղնակապ քարին դերը՝ աղեղը ճնշումի տակ պահելու, եւ աղեղը կը տկարացնէ: Եւ օր մըն ալ աղեղնակապ քարին իյնալովը՝ աղեղը կը կործանի: Յաճախ հին շէնքերու վրայ կը տեսնուի որ, այս ճեղքին պատճառով, աղեղնակապ քարը դէպի վար սահած է, ինչ որ ցոյց կու տայ՝ թէ աղեղը բացուելու եւ կործանելու հակամէտ է (Պատ. 7 - III):

Աղեղին կողերուն վրայ բացուած Բ ճեղքը յառաջ կը բերէ աղեղին ներքին հաւասարակշռութեան մէջ խանգարում մը: Զեղքուած մասին վրայ, աղեղնաքարերը ալեւա իրարու չեն հպիր եւ աղեղին ամբողջ ճնշումը կը կեդրոնանայ Գ կէտին վրայ, որ անկարող ըլլալով ալ ճնշումին հակադրելու, կը փշրուի եւ աղեղը կը կործանի:

Բ. ԶԵԻ. — Եթէ աղեղը սրակտուց է, անոր ձեւափոխութիւնը կը տարբերի: Հոս՝ աղեղնակապն է որ պիտի ձգտի դէպի դուրս բացուիլ, մինչդեռ կողերուն վրայ ճեղքը ներսէն կը փակուի (Պատ. 7 - IV): Այս պարագային՝ աղեղնակապ քարը ալեւա իր դերը չի կրնար կատարել աղեղը ճնշումի տակ պահելու համար, ինչ որ պատճառ կ'ըլլայ աղեղի կործանումին:

Կամարի մը եւ կամ աղեղի մը մէջ, անոր կաղմութեան իսկ պատճառով, պէտք է միշտ աղեղը կամ կամարը մնայ ճնշումի տակ՝ այս ճնշումը աղեղնաքարերուն ամբողջ մակերեսին վրայ հաւասարապէս բաժնուած ըլլալով:

Արդ, ատամնաւոր կամարաքարերու գործածութիւնը՝ աղեղի մը մէջ՝ կը ձգտի վերը յիշուած կամարի ճեղքերուն անպատեհութիւն-

ները արագրելու: Եթէ նոյնիսկ՝ որեւէ պատճառով աղեղը ձգտի բացուելու, կամարակապ քարը իր ատամնաւոր տաշուածքին շնորհիւ կը պահէ իր դիրքը, քովնտի կամարաքարերուն կառչելով եւ դէպի վար չի սահիր, որով կամարը կը պահէ իր ամրութիւնը: Կամարակապ քարը կը կատարէ երիթի (coin) դերը (Պատ. 7 - I):

Արդ Զ. դարուն, Թէոդորիկոսի դամբարանին ճարտարապետը դիտէր ուրեմն կամարի մը ձեւափոխութիւնները եւ, ամէն պատահականութեան առջեւ առնելու համար, ալ կոթողին կամարաքարերը տաշեր է ատամնաւոր: Սակայն Զ. դարուն, ո'չ Գոթերը եւ ոչ ալ Իտալացիները ի վիճակի էին շինարարական այսքան նրբութիւններ տեսնելու եւ կիրարկելու: Մնաց որ, ինչպէս ըսինք, ո'չ Հռոմ եւ ոչ ալ Բիւզանդիոն նման գիտարուեստի մը նախնական նմոյշը տրուած են:

Ճարտարապետութեան պատմաբանները եւ այս մասին զարմանքով խօսող բոլոր տիտղոսաւոր գիտունները՝ անպիտացած են եւ տակաւին կ'անգիտանան, քանի որ ոչ ոք իրենց մատնանիչ ըրած է թէ այս ձեւ տաշուած կամարաքարերով շինութեան մը նախատիպը դոյութիւն ունի միայն հեռաւոր Հայաստանի մէջ: Եւ ալ, զարմանալիօրէն, ճիշտ Ե. Էն Զ. դար անցքի այս շրջանին կիրարկուած՝ Տեկորի հինաւուրց եկեղեցիին աղեղներուն վրայ:

ՏԵԿՈՐԻ ՏԱՃԱՐԸ

Քրիստոնէութեան Հայաստանի մէջ հաստատուած տարիներուն՝ թէեւ բազմաթիւ հեթանոսական մեհեաններ քանդուեցան, քայքայուիչներ եւ կարեւոր շինութիւններ փոխակերպուեցան քրիստոնէական եկեղեցիներու: Այս վերափոխուած մեհեաններէն մին եղաւ Տեկորի մեծ տաճարը:

Տեկորի տաճարը՝ հայկական ճարտարապետութեան հնագոյն մէկ նմոյշն է¹¹:

Տեկորի մեհեանը, քրիստոնէական եկեղեցիի վերածելու համար, անոր աւելցուցին խորանը իր յարակից սենեակներով, քրիստոնէական ծէսին պարտադրութիւններուն համաձայն: Սկիզբը՝ ան չունէր կաթողիկէ եւ ոչ ալ խաչաձեւ տանիք:

Ե. դարուն Յովհաննէս Մանդակունիի կաթողիկոսութեան (472-490) երկրորդ շրջանին է որ ձեռնարկուեցաւ, պարսկական պատերազմներէն վնասուած եւ կիսակործան յուշարձաններու վերաշինութեան եւ վերակաղմութեան: Յովհաննէս Մանդակունիի կաթողիկո-

11. ՏԵՄ Թ. ԹՈՐԱՄԱՆԵԱՆ, Տեկորի Տաճարը, Թիֆլիս, 1911:

սուբեկան պարսիկ արքունիքին կողմէ պետական վաւերացումը տեղի ունեցաւ 485ին¹²։

Տեկորի տաճարին վերաշինութիւնը, Սահակ Կամսարականի ձեռքով, Յովհաննէս Մանգակունի կաթողիկոսին եւ Յովհաննէս Արշարունեաց եպիսկոպոսին օրովը կատարուեցաւ 485 թուականէն վերջ։

Այս տաճարը մեծամեծ փոփոխութիւններու ենթարկուեցաւ եւ այս առթիւ, հայրապետական Աթոռ Էջմիածնի Մայր տաճարին խաչածեւ տանիքին նման, խաչածեւ տանիք մը դրին եւ քարաշէն կաթողիկէ բարձրացնելու թերեւս առաջին փորձը կատարեցին, հակայ քարաշէն խորանարդածեւ խարիսխին վրայ՝ փայտաշէն վեղարը դրնելով։ Արդարեւ, ինչպէս Թորամանեան կը կարծէ¹³, այդ խորանարդածեւ խարիսխին վրայի ցածիկ ութանկիւն թմբուկը եւ կոնածեւ վեղարը քարաշէն՝ Ժ. դարէն աւելի հին կարելի չէ համարել։

Մինչեւ Ե. դարու վերջը, Հայերը կաթողիկէն կը շինէին փայտաշէն, որովհետեւ տակաւին չէին տիրացած քարաշէն դմբէթ շինելու գիտարուեստին¹⁴։

Տեկորի տաճարին վրայ է որ հայ ճարտարապետը առաջին անգամ ըլլալով կը փորձէ քարաշէն դմբէթ-կաթողիկէ դնել, որ կը կառուցուէր տանիքին խաչածեւումած թեւերուն միացման կէտին։ Ասոր համար է որ այս նախնական փորձը, քարաշէն դմբէթ շինելու, տուաւ հակայ խորանարդածեւ շինութիւն մը, որ յետագայ դարերուն քարաշէն դմբէթ շինելու գիտարուեստին յառաջացումովը, փոքրացաւ՝ չէնքին մէջ պարտկելու աստիճան։

Հարկ է նաեւ նկատի առնել թէ, Տեկորի պարագային՝ որ վերանորոգում մըն էր, ճարտարապետը ազատ չէր իր շինութիւնը այնպէս մը կարգաւորելու՝ որ այդ խորանարդածեւ հակայ խարիսխը չէնքին կազմական դրութեան մէջ, կարելի եղածին չափ, անտեսանելի պահէր։ Հոն՝ ճարտարապետը պարտաւոր էր գոյութիւն ունեցող որմերը, տանիքը եւ սիւները յարգել եւ անոնց վրայ աւելցնել դմբէթին խարիսխը։

Այս հակայ ծանրութիւնը վերցնելու համար, ճարտարապետը շինեց՝ ներքին չորս մոյթերը իրար կապող, հաստատուն չորս աղեղներ։ Արեւելեան եւ Արեւմտեան աղեղներու բացումըն էր 5,90 մետր, իսկ հիւսիսային եւ հարաւային աղեղները ունէին 4,80 մետր բացումը մը։ Այս աղեղներու ձեւը պայտածեւ (outrepassé) էր։

Այս աղեղները շինուեցան, ճարտարապետութեան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, մասնաւոր տաշուածքով, ատամնաւոր

12. ՕՐԱՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Ա., Կ. Պոլիս, 1912, սիւն 476։

13. Թ. ԹՈՐԱՄԱՆԵԱՆ, ամդ, էջ 96։

14. Թ. ԹՈՐԱՄԱՆԵԱՆ, ամդ, էջ 80։

աղեղնաքարերով։ Այս եղակի շինութեամբ, ինչպէս աւելի վերը բացատրեցի, աղեղներուն կու տայ մասնաւոր գլխադրական յատկութիւն մը անոնց ձեւափոխումին դէմ եւ որ կը կանխէ աղեղներուն բացուելու վտանգը։

Այս աղեղներուն շինութիւնը մօտաւորապէս պէտք է տեղի ունեցած ըլլայ 485-490 թուականներուն, այսինքն Հռաւեննայի դամբարանին շինութեան (520) 25-30 տարի մը առաջ։ Ժամանակամիջոց մը՝ ուր տակաւին կ'ապրէր Տեկորի ճարտարապետը։

Հայկական այլ կառուցումներու վրայ, Ե. դարէն ասդին, նման ատամնաւոր աղեղնաքարերու ուրիշ օրինակ չենք տեսներ։ Ինչ որ շատ հաւանական կը դարձնէ այն ենթադրութիւնը՝ թէ այս ձեւի քարեր տաշելու գիտարուեստը Տեկորի տաճարը վերանորոգող հայ ճարտարապետին անձնական մէկ հնարքը ըլլայ։

Հռաւեննայի դամբարանին աղեղնաքարերու ատամնաւոր տաշութեամբ ալ եղակի կը մնայ ամբողջ Արեւմուտքի մէջ։

Այս պարագային կը թելադրէ հետեւեալ եզրակացութիւնը՝ թէ այդ տաշութեամբ ալ թէոքորիկոսի դամբարանի ճարտարապետին մէկ նոր հնարքը եղած ըլլայ, մինչ զարմանալիօրէն իրարու մօտ են այս երկու յուշարձաններուն կառուցումի թուականները։ Եւ քանի որ հաւանական է, ըստ նոյնինքն գրաւոր աղբիւրներու, որ Թէոքորիկոսի արքունիքին մէջ կ'աշխատէին արեւելցի ճարտարապետներ, տարակոյս պէտք չէ վերցնէ, կը կարծենք, թէ Տեկորի տաճարը վերանորոգող ճարտարապետը եւ Հռաւեննայի դամբարանին ճարտարապետը միեւնոյն դպրոցին կամ կառուցողական աւանդութեան պատկանող անձեր ըլլան։ Թերեւս յանդգնութիւն չըլլայ ենթադրել թէ անոնք ըլլան միեւնոյն անձը, կամ մինչեւ իսկ նոյնանա Վասիլոփորի յիշած Դանիէլ ճարտարապետին հետ, թէեւ այս ուղղութեամբ կը պակասի որեւէ գրաւոր փաստ։ Կրնանք, սակայն, ըսել անվարան թէ այդ երկու շինութեաններուն ճարտարապետները շատ մօտիկ են իրարու իրենց արուեստով, գիտարուեստով ու կառուցողական ըմբռնումով, եւ վիճաբարձներուն նման՝ հասարակաց ստորագրութիւն մը դրած են այդ երկու հեռաւոր, բայց գրեթէ երկուրեակ կառուցումներուն վրայ, իրենց ատամնաւոր կամարաքարերով։

Դամբարանի ճարտարապետին հայութիւնը սա պարագային ալ կը հետեւի՝ որ ան, բոլորովին իւրացուցած չըլլալով քարաշէն դմբէթ շինելու գիտարուեստը, քանի որ Ե. դարու ճարտարապետ էր, Թէոքորիկոսի դամբարանին խնայելու համար Տեկորի կաթողիկէին հըս-դորիկոսի դամբարանին խնայելու համար Տեկորի կաթողիկէին հըս-դորիկոսի դմբէթ շինելու գիտարուեստը միակտուր սալաքարով մը։ Աւելցնենք որ՝ այս դամբարանին դմբէթը եղբորը քիւին զարդաքանդակները, որոնք մասնաւոր (entrelacs) դժագրութիւն մը ունին, կը

յի շինարարական զարգացման գործընթացը, որոնք Ե. դարուն կը դուրս-ծածուկէին Հայաստանի մէջ:

Քիւերու կազմութեան ձեւն ալ Հռաւեննայի մէջ՝ կը համապատասխանէ Տեկորի քիւերու դժադրութեան: Արդէն տեսանք սրբատաշ քարերով կառուցուած որմերու շինութեան ձեւը Հռաւեննայի դամբարանին վրայ, որ կը համապատասխանէ հայկական որմնադրական դրոշմին:

Պատմական կարեւոր ճշտում մը ըրած կ'ըլլանք հաստատելով որ Հռաւեննայի՝ Թէոդորիկոսի դամբարանին շինուած ձեւը հայկական տարազ կը կրէ եւ թէ անոր ճարտարապետը հաւանօրէն միեւնոյն հայ ճարտարապետն է՝ որ վերանորոգած է Տեկորի տաճարը, եւ կամ ստուգապէս միեւնոյն դպրոցին պատկանող անձ մը:

Արեւմուտքի մէջ, ճարտարապետութեան պատմադիրներէն քանին՝ Թ. Ժանօթ էին Հայաստանի մէջ պոյութիւն ունեցող Տեկորի տաճարին, որպէսզի կարենային մերձեցում մը ընել այս երկու յուշարձաններուն միջեւ, տեսնելու համար թէ՝ Թէոդորիկոսի դամբարանը հայկական շինարուեստ է: Եւ քանին՝ արդեօք, նոյնիսկ անոնցմէ որ հայ ճարտարապետութեամբ կը հետաքրքրուին, կարդացած են լրիւ Ստրիջովսկիի եւ Թորամանեանի լայնածաւալ եւ հիմնական աշխատութիւնները:

Հայկական ճարտարապետութեան դէպի Արեւմուտք արձակած ճիւղերէն մէկն ալ հայեր է, ահա, Հռաւեննայի Թէոդորիկոսի դամբարանին եւ հոն ձգեր է իր անջնջելի դրոշմը:

ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ Ս.

Résumé

LE MAUSOLÉE DE THÉODORIC A RAVENNE ET LA TECHNIQUE DE CONSTRUCTION ARMÉNIENNE

(Ing. S. DJEVAHIRDJIAN)

L'A. après avoir décrit les différentes étapes de l'ascension du chef Ostrogoth Théodoric à la tête du royaume Ostrogoth d'Italie, examine de près la technique de la construction du Mausolée que Théodoric a fait bâtir, pour lui, à Ravenne. Le Mausolée de Théodoric a suscité beaucoup de controverses concernant sa forme initiale. Il présente une singularité architecturale, dans un pays où le matériau de construction, traditionnel-

lement, est la brique et les formes architecturales pratiquées sont du type basilicaire. Ce Mausolée est construit en pierre de taille, sur plan polygonal. Il présente une curieuse façon de taille des voussoirs de ses arcs. La taille de ces voussoirs est «à crossettes». Les historiens de l'architecture passent en général sous silence ce fait très important. Auguste Choisy, dans son «Histoire de l'Architecture» s'étonne et déclare de ne pas connaître au monde d'autres exemples de cette taille à crossette des voussoirs d'un arc. L'A. fait remarquer qu'il existe un autre exemple de cette taille «à crossettes» des voussoirs des arcs. Cet exemple se trouve en Arménie, dans l'église de Tekor où les quatre arcs porteurs de la coupole sont formés par des voussoirs à crossettes. A Tekor les quatre arcs furent construits lors de la réfection du Temple en 485-495. A Ravenne c'est en 520 qu'on trouve ces voussoirs à crossettes, soit 25 ans après. Ils sont donc de la même époque. Ces voussoirs à crossettes sont, vraisemblablement, une invention, un artifice de construction, propre à l'architecte restaurateur de l'église de Tekor, qui chercha sans doute, à éliminer, par la taille à crossettes des voussoirs, l'éventualité d'une déformation des arcs. Cette technique, adoptée pour la première fois en Arménie, fait partie de la manière de construire des Arméniens. Quelques années après on la retrouve à Ravenne, sur le Mausolée de Théodoric.

On connaît par Cassiodore un des architectes de Théodoric, Daniel, mentionné dans les années 507-511. On a supposé, à bon droit, que ce Daniel était, probablement d'origine orientale, étant donné la rareté parmi les Romains, à cette époque, des noms hébraïques.

L'A. déduit de l'affinité technique des deux monuments que leurs architectes appartenaient à la même école, s'il ne s'agissait pas d'une seule et même personne. On pourrait encore supposer, bien qu'on n'ait aucune preuve concrète pour une telle hypothèse, que Daniel lui-même fût le constructeur des deux monuments. L'A. fait aussi remarquer que l'architecte a couvert le Mausolée de Ravenne d'un bloc monolithe, taillé en forme de coupole, au lieu d'une coupole maçonnée. Ceci est significatif pour l'identification de l'architecte. Au V^e siècle les architectes arméniens ne possédaient pas encore la technique des coupôles en pierres maçonnées. A Tekor l'architecte essaya en 495 la première coupole (catholicon) en pierres maçonnées, mais cette coupole primitive arménienne ne pouvait avoir sa place sur le Mausolée de Théodoric où il fallait une calotte de coupole très surbaissée. Une coupole maçonnée et fortement surbaissée, en ce V^e siècle, est encore impensable. L'architecte a détourné la difficulté en adoptant une couverture monolithique, taillée en forme de coupole très surbaissée. Les voussoirs à crossettes des arcs, la façon de maçonner les murs, l'invention de la coupole monolithe, la sculpture décorative de la frise et les profilés des corniches indiquent assez clairement la personnalité de l'architecte, sa provenance et le genre de sa technique. Le Mausolée de Théodoric à Ravenne est un exemple de la technique arménienne de la construction au V^e siècle, qui se présente en avant-garde d'autres formes architectoniques arméniennes que nous trouverons plus tard en Occident.